ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.11.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/172

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 17.10.2019թ. թիվ 26/26-1/17078-2019 գրությամբ «Դայմոնդ Մեդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 14.10.2019թ. թիվ V02.4/16657-19 գրության հիման վրա, 17.10.2019թ. թիվ 26/26-1/17078-2019 գրությամբ նախաձեռնել է «Դայմոնդ Մեդ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Դայմոնդ Մեդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ «Դայմոնդ Մեդ» ՍՊԸ-ի կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

«Դայմոնդ Մեդ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/172 ընթացակարգի շրջանակներում 28.10.2019թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. «Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 14.10.2019թ. թիվ V02.4/16657-19 գրությամբ հայտնել է, որ «Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի և «Դայմոնդ Մեդ» ՍՊԸ-ի միջև ապրիլի 4-ին կնքված «ԳՀԱՊՁԲ-2019/16-6-ԵՊԲՀ-4» ծածկագրով պայմանագրի համաձայն, Ընկերությունը պարտավոր էր Պատվիրատուի կողմից պահանջ ներկայացնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում մատակարարել պահանջում առկա ապրանքները՝ համապատասխան քանակներով: Պայմանագրի շրջանակներում Ընկերությանը 05.06.2019թ. ներկայացվել է ապրանքների մատակարարման պահանջ թիվ 1-ը, և 18.06.2019թ. ներկայացվել է ապրանքների մատակարարման պահանջ թիվ 2-ը, որոնց մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել՝ համապատասխանաբար՝ թիվ 1 պահանջի համար 24.06.2019թ.-ը, թիվ 2 պահանջի համար՝ 07.07.2019թ., սակայն Ընկերության կողմից մինչ օրս մատակարարվել է թվով 8 հատ «Միզածորանային ստենտ հակաբակտերիալ, Bioteq» (5 հատ մատակարարվել է 17.07.2019թ.-ին, 3 հատ 15.08.2019թ.-ին, որի ընդհանուր արժեքը կազմել է 112 000 ՀՀ դրամ):

«Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ռեկտորի հրամանով ստեղծված պատասխանատու ստորաբաժանման կողմից 03.09.2019թ. պատշաճ կերպով մատակարարումներ չիրականացնելու մասին ծանուցվել է Ընկերությանը և տրվել է 5 օրացուցային օր ժամկետ՝ մատակարարումները

մնացորդային մասով իրականացնելու համար, սակայն սահմանված ժամկետներում մատակարարում տեղի չի ունեցել:

Ռեկտորի կողմից 2019 թվականի հոկտեմբերի 1-ին գրավոր սահմանվել է նոր ժամկետ՝ մինչև 2019 թվականի հոկտեմբերի 4-ը ներառյալ, որի վերաբերյալ պատշաճ եղանակով իրականացվել է տեղեկացում Ընկերությանը, սակայն նոր ժամկետներում նույնպես մատակարարում տեղի չի ունեցել:

Հիմք ընդունելով վերոգրյալը և Պայմանագրի 2.1 կետի 2.1.7 ենթակետը, Համալսարանը 2019 թվականի հոկտեմբերի 10-ից միակողմանի լուծել է Պայմանագիրը, որի ընդհանուր արժեքը կազմել է 4 870 000 ՀՀ դրամ:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/172 ընթացակարգի շրջանակներում 28.10.2019թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/172 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/172 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի և «Դայմոնդ Մեդ» ՍՊԸ-ի միջև 04.04.2019թ. կնքվել է բժշկական նշանակության ապրանքների մատակարարման «ԳՀԱՊՁԲ-2019/16-6-ԵՊԲՀ-4» ծածկագրով պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Պատվիրատուն պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պատվիրատուի կողմից 11.10.2019թ. www.gnumner.am տեղեկագրում հրապարակվել է «ԳՀԱՊՁԲ-2019/16-6-ԵՊԲՀ-4» ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 17.10.2019թ. թիվ 26/26-1/17078-2019 գրությունը, «Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 14.10.2019թ. թիվ V02.4/16657-19 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

«Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի և «Դայմոնդ Մեդ» ՍՊԸ-ի միջև 04.04.2019թ. կնքվել է բժշկական նշանակության ապրանքների մատակարարման «ԳՀԱՊՁԲ-2019/16-6-ԵՊԲՀ-4» ծածկագրով պայմանագիր, որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Պատվիրատուն պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 3-րդ կետի 3.1 ենթակետի համաձայն՝ Պայմանագրի գինը կազմում է 4 982 000 ՀՀ դրամ:

Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, աշխատանքների մատակարարման ժամկետ է սահմանվել 2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում:

Պատվիրատուի կողմից Պայմանագրի շրջանակներում 05.06.2019թ. Ընկերությանը ներկայացվել է ապրանքների մատակարարման թիվ 1 պահանջ, որի համաձայն՝ Ընկերության կողմից պետք է մատակարարվեր «Մեզի ֆոլեյ կաթետեր երկճյուղ 18 Fr, սիլիկոնե, 15-30մլ բալոնով, Fortune Medical» 5 հատ և «Մեզի ֆոլեյ կաթետեր երկճյուղ 16 Fr, սիլիկոնե, 15-30մլ բալոնով, Fortune Medical» 5 հատ, որոնց համար մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել 24.06.2019թ., իսկ 18.06.2019թ.

ներկայացվել է թիվ 2 պահանջը, որի համաձայն՝ պետք է մատակարարվեր «Մեզի ֆոլեյ կաթետեր եռաճյուղ 24 Fr, Euromed» 40 հատ, որի համար վերջնաժամկետ է սահմանվել՝ 07.07.2019թ.:

Ընկերությանն ուղղված 03.09.2019թ. գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ Պայմանագրի շրջանակներում Ընկերությանը ներկայացվել է թիվ 1 և թիվ 2 պահանջները՝ ապրանքների մատակարարման համար, որոնցով մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել թիվ 1 պահանջի համար՝ 24.06.2019թ., իսկ թիվ 2 պահանջի համար՝ 07.07.2019թ., սակայն Ընկերության կողմից մինչ օրս՝ 03.09.2019թ. դրությամբ, իրականացվել է թվով 8 հատ «Միզածորանային ստենտ հակաբակտերիալ, Bioteq» ապրանքատեսակի մատակարարում (5 հատ 17.07.2019թ. և 3 հատ 15. 08.2019թ. Հերացի թիվ 1 հիվ. համալիր), իսկ պահանջներով ներկայացված մնացած ապրանքատեսակների մասով՝ մատակարարում չի իրականացվել:

Նույն գրությամբ Պատվիրատուն նախազգուշացրել է, որ Ընկերության կողմից վաղուց սպառվել է Պայմանագրի 2.1 կետով սահմանված ժամկետը, ինչպես նաև այն, որ Ընկերությանը բազմիցս բանավոր ծանուցվել է այդ ապրանքատեսակների խիստ անհրաժեշտության մասին, ուստի Ընկերությանը տրվում է ևս 5 օրացուցային օր ողջամիտ ժամկետ մատակարարումները մնացորդային մասով իրականացնելու համար, հակառակ դեպքում կկիրառվեն Պայմանագրով ամրագրված դրույթները:

Ընկերությանն ուղղված 01.10.2019թ. թիվ 09/1820 գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ 03.09.2019թ. պատշաճ կերպով մատակարարումներ չիրականացնելու մասին ծանուցվել է Ընկերությանը, սակայն մինչ օրս Ընկերության կողմից առկա չէ որևէ արձագանք, ուստի Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.5 կետը իր հայեցողությամբ սահմանում է ապրանքի մատակարարման նոր ժամկետ՝ մինչև 2019թ. հոկտեմբերի 4-ը ներառյալ, միաժամանակ նախազգուշացնելով, որ նշված ժամկետում ապրանքների ամբողջ խմբաքանակը չմատակարարելու դեպքում միակողմանի կլուծվի Պայմանագիրը և Ընկերության նկատմամբ կկիրառվեն գնումների մասին օրենսդրությամբ սահմանված միջոցները:

Ընկերությանն ուղղված 10.10.2019թ. թիվ 09/1901 գրությամբ Պատվիրատուն հայտնել, որ Ընկերությունը նոր սահմանված ժամկետներում նույնպես մատակարարում չի իրականացրել, ուստի հիմք ընդունելով Պայմանագրի 2.1 կետի 2.1.7 ենթակետը՝ Պատվիրատուն 10.10.2019թ. միակողմանի լուծում է Պայմանագիրը:

Պատվիրատուի կողմից 11.10.2019թ. www.gnumner.am տեղեկագրում հրապարակվել է «ԳՀԱՊՁԲ-2019/16-6-ԵՊԲՀ-4» ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը***:

Պայմանագրի 2.1.7-րդ ենթակետի համաձայն՝ ***Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:***

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ ***Վաճառողի կողմից պայմանագիրը խախտեն էական է համարվում, եթե՝***

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ***ժամկետները խախտվել են 10 օրից ավելի***:

Այսպիսով՝ «Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի և «Դայմոնդ Մեդ» ՍՊԸ-ի միջև 04.04.2019թ. կնքված « ԳՀԱՊՁԲ-2019/16-6-ԵՊԲՀ-4» ծածկագրով պայմանագրի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանված 2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում իրականացնել 4 982 000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ ապրանքների մատակարարում, սակայն Ընկերության կողմից ամբողջությամբ չեն իրականացվել թիվ 1 և թիվ 2 պահանջներով սահմանված ժամկետներում պահանջներով նախատեսված ապրանքների մատակարարումը և Պայմանագիրը լուծելու օրվա դրությամբ, համաձայն հանձնման-ընդունման թիվ 1 և թիվ 2 արձանագրությունների՝ իրականացվել են միայն 112 000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ ապրանքների մատակարարում:

Այսպիսով՝ վերոգրյալով պայմանավորված գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրով նախատեսված պարտավորության խախտում, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը, ուստի գտնում եմ, որ

առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 17.10.2019թ. թիվ 26/26-1/17078-2019 գրությամբ «Դայմոնդ Մեդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Դայմոնդ Մեդ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է որոշումը պատվիրատուին, լիազորված մարմին ու բողոքարկման ընթացակարգում ներգրավված կողմերին ուղարկելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**